ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ

ՊԼԱՆ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

Հաստատված՝ 31.08.2022թ. մանկավարժական խորհրդի նիստում

/արձանագրություն N 14 /

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ Հ. 64 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

Փոխտնօրեն՝ Լ. Մկրտչյան

Կ.Տ. Տնօրեն՝ /Ե. Հարությունյան /

ԵՐԵՎԱՆ 2022

Երեխայի դաստիարակությունը պետական կրթական համակարգի ռազմավարական խնդիրներից է, մանկավարժական կոլեկտիվի գեր նպատակը:

Դաստիարակության խնդիրը վերաբերվում է ողջ ազգին, պետությանն ու հասարակությանը:

Դպրոցի դաստիարակչական աշխատանքի հիմքում դրված է ազգային արժանապատվությամբ, քաղաքացիական գիտակցութ-յամբ օժտված անհատի ձևավորումը:

Հանրակրթական գիտելիքներին համընթաց երեխան պետք է ստանա բազմակողմանի դաստիարակություն:

Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել համապատասխան պայմաններ, կիրառել տարբեր մեթոդներ երեխայի ճանաչողական, գեղա-գիտական, հոգևոր, ֆիզիկական դաստիարակության համար: Անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին:

Դրա համար դպրոցականների շուրջը պետք է ստեղծել առողջ և բարոյական մթնոլորտ: Այս լուրջ խնդիրը իրականացնելու համար պատասխանատու է ողջ մանկավարժական կոլեկտիվը, իսկ հիմնական կրողն ու իրականացնողը մասնագիտական կրթական աջակցությունների գծով փոխտնօրենն է, մանկական կոլեկտիվի կազմակերպիչը և դասղեկները: վերջիններիս արդյունավետ աշխատանքով է պայմանավորված դաստիարակչական գործընթացի արդյունավետությունը:

Դաստիարակչական աշխատանքները պլանավորելիս այս տարի հաշվի ենք առել հակահամաճարակային իրավիճակը և նոր մոտեցումներ ենք ծրագրել:

Դպրոցի կրթական աջակցությունների գծով փոխտնօրենը իր աշխատանքները պլանավորելիս պետք է շեշտ դնի աշխատանքի հետևյալ ուղղությունների վրա

√ Աշխատանք դասղեկների հետ

√ Աշխատանք ծնողների հետ /առցանց/

√ Աշխատանք դպրոցի աշակերտական խորհրդի հետ

√ Աշխատանք <<ռիսկային խմբին>> պատկանող երեխաների հետ

√ Աշխատանք անապահով ընտանիքների երեխաների հետ

√ Աշխատանք շնորհալի երեխաների հետ

√ Աշխատանք տարբեր հասարակական կազմակերպությունների հետ

√ Կազմակերպչական աշխատանքներ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

№	Աշխատանքի անվանումը	Ժամկետը	Կատարող
1	6-9-րդ դասարաններում անցկացնել աշակերտական խորհրդի նիստ պահպանելով հակահամաճարակային կանոնները	Մինչև 26.09	Փոխտնօրեն Կազմակերպիչ
2	6-9-րդ դասարանների սովորողների ընդհանուր ժողովում հաստատել նախորդ տարվա կազմը	Մինչև 26.09	Փոխտնօրեն Կազմակերպիչ
3	Համապատասխան աշխատանք տանել աշակերտական ինքնավարության զարգացման ուղղությամբ: Երեխաներին ծանոթացնել իրենց իրավունքներին և պարտականություններին	Աշխ. Ընթացքում Դասղեկ. ժամերին	Դասղեկներ Փոխտնօրեն
4	Աշակերտական խորհրդի աշխատանքները պլանավորել աշակերտների առաջարկությունների և ցանկությունների հիման վրա	Մինչև սեպտեմբերի վերջ	
5	Բոլոր դասարաններում կատարել ծնողական խորհրդի ընտրություններ, ծնողական ակտիվի ժողովում անցկացնել ծնող խորհրդի ընտրություններ, ընտրել նախագահ և երկու տեղակալ: Ամրապնդել ծնող-ուսուցիչ, ընտանիք-դպրոց կապը:	Մինչև 24.09	Դասղեկներ Փոխտնօրեն
6	Համապատասխան աշխատանք տանել անապահով ընտանիքների, բազմանդամ ընտանիքների երեխաների հետ: Հատուկ ուշադրություն դարձնել ծնողազուրկ երեխաներին:	Աշխ, ընթացքում	Տնօրեն Փոխտնօրեն Դասղեկներ
7	Ճշտել շնորհալի երեխաների ցուցակները և նրանց հնարավորությունները օգտագործել համապատասխանաբար	Դասղեկական պլաններ	
8	Անմիջական կապի մեջ լինել անչափահասների գործերով զբաղվող	Աշխ.	Փոխտնօրեն

	տեսուչի հետ: Ստուգել <<Ռիսկային խմբին>> պատկանող երեխաների դասերից դուրս զբաղվածությունը	ընթացքում	
9	Սիստեմատիկ անցկացնել դասղեկական խորհրդակցություն: Նոր նշանակված դասղեկների հետ համապատասխան աշխատանք տանել: Հաստատել դասղեկական պլանները: √ամեն ամիս ծանոթանալ դասղեկների կատարած աշխատանքներին √ հարցազրույց անցկացնել բոլոր դասարանների ծնողների հետ և վերլուծել այն:	Աշխ. ընթացքում	Փոխտնօրեն Դասղեկներ
10	Կազմել ծնողների հետ տարվող աշխատանքների պլան, պլանը կազմելիս հաշվի առնել ծնող խորհրդի առաջարկությունները:	Մինչև 25.09	Փոխտնօրեն
11	Ստեղծել բոլոր օղակների ուսումնական, դաստիարակչական, աշակերտական, ծնողական, համակարգ: Հասնել նրան, որ ուսումնական և դաստիարակչական կառույցները պարզորոշ լինել և լրացնեն միմյանց:	Աշխ. ընթացքում	Փոխտնօրեններ Դասղեկներ
12	Աշխատանքի ընթացքում հրաժարվել վարչա-հրամայական մեթոդներից: Դասղեկ-ուսուցիչ, ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող հարաբերությունները դարձնել ավելի պարզ:	Աշխ. ընթացքում	Դասղեկներ
13	Լրացուցիչ աշխատանք կատարել անհարգելի բացակայող և ուշացող աշակերտների հետ:	Յուր. Ամսվա վերջում	Փոխտնօրեն Դասղեկներ
14	Կազմակերպել առցանց դասղեկային ժամեր, որի ընթացքում աշակերտներին հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին:	Դասղեկական ժամերին	Դասղեկներ

ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

№	Աշխատանքի անվանումը	Ժամկետը	Կատարող
1	Ստեղծել դասղեկական մեթոդ միավորում ըստ հրահանգի անցկացնել նիստեր առցանց եղանակով	Մինչև 08.09	Փոխտնօրեն Դասղեկներ
2	Ծանոթանալ. վերլուծել և հաստատել դասղեկական պլանները: Դասղեկական պլանները ցանկալի է կազմել դպրոցի դաստիարակչական աշխատանքների պլանի հիման վրա	Մինչև 22.09	Փոխտնօրեն
3	Կազմել դասղեկական ժամերի գրաֆիկը և սիստեմատիկ հետևել նրանց անցկացման արդյունավետությանը առցանց եղանակով	Մինչև 17.09	Փոխտնօրեն
4	Դասղեկի ամենօրյա աշխատանքի հիմքում դնել աշխատանք ծնողների հետ: Ամրապնդել դպրոց-ընտանիք, դասղեկ-ծնող կապը:	Սիստեմատիկ, աշխ. ընթացքում	Փոխտնօրեն Դասղեկներ
5	Դասղեկական ժամերը օգտագործել երեխաների հետ անմիջական մտերմիկ կապի ամրապնդման, անկեղծ մթնոլորտի ստեղծման համար	Դասղեկական ժամերին	Դասղեկներ
6	Դասղեկների միջոցով և ծնող խորհրդի օժանդակությամբ համապատասխան աշխատանք տանել ծնողազուրկ, անբարենպաստ ընտանիք երեխաների հետ:	Աշխ. ընթացքում	Դասղեկներ
7	Դասղեկները 6-9-րդ դասարանների սովորողների համար պետք է անցկացնեն էթիկայի դասեր՝ տղաների և աղջիկների հետ	Դասղեկական ժամերին	Դասղեկներ

	առանձին, առցանց եղանակով		
8	6-9-րդ դասարանների դասղեկները պետք է օգնեն և ուղղություն տան դասարանական աշակերտական խորհրդին	Ամենօրյա աշխ. ընթացքում	Դասղեկներ
9	Աշխատանքային պլանը կազմելիս դասղեկը պետք է հաշվի առնի իր սաների տարիքային առանձնահատկությունը:	Մինչև 19.09	Դասղեկներ
10	Դասղեկը պետք է վարի հետևյալ փաստաթղթերը •Աշակերտների անձնական գործերը •Դասղեկական պլան		Դասղեկներ

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՀԵՏ

№	Աշխատանքի անվանումը	Ժամկետը	Կատարող
1	Բոլոր դասարաններում առցանց եղանակով կազմակերպել ծնողական ժողով, որի ընթացքում ընտրել ծնողներից ակտիվ՝ ծնողական խորհուրդ	01.09-04.09.22թթ	Դասեկներ
2	Ըստ հրահանգի երկու ամիսը մեկ իրականացնել առցանց դպրոցի ծնող խորհրդի նիստ և քննարկել դպրոցին, աշակերտներին, ծնողներին վերաբերվող տարաբնույթ հարցեր	Երկու ամիսը մեկ	Փոխտնօրեն
3	Ծնողական համայնքի ուժերը օգտագործել երեխաների համակողմանի դաստիարակությունը դպրոցում իրականացնելու համար	Աշխատանքի ընթացքում	Ծնողական խորհուրդ
4	Ծնողական խորհուրդին իրազեկել անբարենպաստ ընտանիքների երեխաների մասին	Աշխատանքի ընթացում	Ծնողական խորհրդի նիստ
5	Ծնողների ուշադրությունը հրավիրել դժվար դաստիարակվող երեխաների հետ տարվող աշխատանքներին	Աշխատանքի ընթացքում	Ծնողական խորհրդի նիստ
6	Ծնող խորհրդի միջոցով նպաստել դպրոց-ընտանիք կապի ամրապնդմանը	Ամենօրյա աշխատանքի ընթացում	Ծնողական խորհրդի
7	Ծնողներին ծանոթացնել կրթական համակարգի նոր պահանջներին	Խորհրդի նիստեր	Տնօրեն
8	Ծնողական խորհրդի նախագահին մասնակից դարձնել մանկավարժական խորհրդում քննարկվող որոշ հարցերին		

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

	Աշխատանքի անվանումը	Ժամկետը	Կատարող
	6-9-րդ դասարաններում ընտրել աշակերտական խորհուրդներ	Մինչև 28. 09	Փոխտնօրեն Կազմակերպիչ
2	Աշակերտական ընդհանուր ակտիվի ժողովում հաստատել նախորդ տարվա աշակերտական խորհուրդը, խորհրդի նախագահ	Մինչև 26.09	Փոխտնօրեն Կազմակերպիչ
3	6-9-րդ դասարանների ակտիվի մասնակցությամբ հրավիրել արտահերթ նիստ պահպանելով հակահամաճարակային պայմանները, ուս. տարվա ընթացքում 2 անգամ	Կիսամ. մեկ	Փոխտնօրեն Աշակերտական խորհուրդ կազմակերպիչ
4	Աշակերտական խորհրդի նախագահը խորհրդական ձայնի իրավունքով կարող է մասնակցել մանկավարժական խորհրդի այն նիստին, ուր քննարկվելու են աշակերտներին անմիջականորեն վերաբերվող հարցեր		Աշակերտական խորհուրդ
5	Աշակերտների ինքնավարության հիմնական նպատակը պետք է նպաստի համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը		

ԱՇԽԱՏԱՆՔ ՌԻՍԿԱՅԻՆ ԽՄԲԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ և ԱՆՊԱՐԵՆՊԱՍՏ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

№	Աշխատանքի անվանումը	Ժամկետը	Կատարող
1	Դպրոցում ստեղծել հատուկ հանձնախումբ ռիսկային խմբին պատկանող երեխաների դաստիարակության համար	Մինչև սեպտ. վերջ	Փոխտնօրեն
2	Այդ կարգի երեխաների հետ տանել անձնական աշխատանք	Աշխ. ընթացում	Փոխտնօրեն Հանձնախմբեր
3	Պարապող ուսուցիչների և հատկապես դասղեկի ուշադրությունը հրավիրել ռիսկային խմբին պատկանող երեխաների վրա	Աշխ. ընթացքում	Դասղեկ
4	Կազմակերպել զրույցներ, ֆիլմերի դիտումների ծխելու վնասարարության մասին	Դասղեկական ժամերին	Դասղեկներ
5	Օգտագործել ռազմագիտության դասերը և ուսուցիչ Գ. Ռամազյանի երխաների հետ տարվող աշխատանքում	Ամենօրյա	Ռամազյան

ԱՇԽԱՏԱՆՔ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Գեղագիտական դաստիարակությունը արտադասարանական աշխատանքի կարևոր օղակներից մեկն է: Այս գործընթացի նպատակն է երեխաների մոտ ձևավորել ճաշակ արվեստ տարբեր ճյուղերի, հասկանալու և գնահատելու ունակություն:

Երեխաների մոտ պետք է զարգացնել լավը, գեղեցիկը տեսնելու և արժեքավորելու հնարավորություն:

Պետք է հասնել նրան, որ յուրաքանչյուր անհատ կարողանա գնահատել ազգային և համագային արժեքները; Դասղեկների և առանձին մասնագիտական առարկաների ուսուցիչների միջոցով երեխան պետք է առնչվի թատրոնի, կինոյի, գեղանկարչության, դասական, ժողովրդական, ժամանակակից երգարվեստին:

Դասղեկները ծնողների հետ համատեղ պետք է ճիշտ կազմակերպեն երեխայի ազատ ժամանակը: Երեխայի և ընդհանրապես հայ մարդու բարոյա-հոգեբանական կերպարի ձևավորման գործում մեծ դեր ունի հայ Առաքելական եկեղեցին: Պետք է մատաղ սերնդին զերծ պահել օտարամուտ, վնասակար աղանդներից:

ԱՇԽԱՏԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ-ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Սպորտային և ռազմահայրենասիրական դաստիարակությունը ևս համարվում է դաստիարակչական աշխատանքի կարևոր օղակներից մեկը:

Կարևորելով ռազմագիտություն առարկայի դերը՝ դպրոցականների մոտ սեր և հարգանք սերմանել հայրենիքի և հայկական բանակի նկատմամբ:

Երեխաներին նախապատրաստել զինվորական ծառայության: Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության հարցը արժանի է մեծ ուշադրության, քանի որ առնչվում է հասարակական կյանքի զարգացման և հայրենիքի պաշտպանության խնդիրներին:

	Աշխատանքի անվանումը	Ժամկետը	Կատարող
1	Դպրոցում ֆիզկուլտուրայի և ռազմագիտության դասերը դարձնել առավել կազմակերպված, առավել արդյունավետ	Ընթացքում	Ռամազյան Ֆիզկուլտուրայի ուսուցիչ
2	Միջառարկայական կապ ստեղծել ֆիզկուլտուրա և ռազմագիտություն առարկանորի միջև	Ընթացքում	Ռամազյան Ֆիզկուլտուրայի ուսուցիչ
3	Բարձր դասարանցիներին նախապատրաստել զինվորական ծառայության	Ընթացքում	Ռամազյան